Արկադի Գասոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի կրկնաճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-21 09:52:36

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026թ. նոյեմբերի 6-ին ժամը 13:00-ին Արկադի Գասոյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք.երևան, Արշակունյաց պողոտա 5 շենք թիվ 109 սենյակ հացեում կանցկացվի Արկադի Գասոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդը՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝
Լոտ 1. ՀՀ, Լոռու մարզ, Մեծ Պարնի համայնք, 13-րդ փողոց, թիվ 68 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 1,504.8 քմ մակերես զբաղեցնող բնակավայրերի նշանակության հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 08112019-06-0023, տրված 08.11.2019թ.):
Աճուրդի ներկայացվող գույքի մեկնարկային գինը կազմում է 826,143 ՀՀ դրամ
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 300,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Արկադի Գասոյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472305538580005 հաշվեհամարին մինչև հայտ ներկայացնելու պահը:
Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ (30.10.2026թ) կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան (ք.Երևան, Օտյան 53/2):
Հայտում պետք է նշվեն պարտապանի անավանումը (անունը ազգանունը, անցկացման օրը, ամիսը, թարեթիվ, կառավարչի անուն ազգանունը, հայտատուի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, իրավաբանական անձ լինելու դեպքում իրավաբանական այնձի անվանումը (նրա անունից հանդես եկող անձի՝ անունը, ազգանունը,

կոնտակտային տվյալները, լիազորված լինելու դեպքում՝ լիազորված լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը) :
Հայտին պետք է կցված լինեն մասնակցության վճարը և նախավճարը վճարված լինելու վերաբերյալ անդորրագրերը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, լիազորված լինելու դեպքում լիազորագիրը:
Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Աճուրդի անցկացման կարգը սահմանում է ՀՀ Արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ N 116-Ն հրամանով:
Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին (094 411 487):

37494411487

a.eloyan@mail.ru

ք. Երևան, Նոր-Արեշ 40 փողոց, 37 տուն